

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏճԱՌՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ

Մ. Հովհաննիսյան
Երևանի պետական պատմական թանգարական



Խորհրդային իշխանության գոյության ընթացքում Բաքվում 1917-1918թթ. տեղի ունեցած քաղաքական զարգացումներն անաշառ ուսումնասիրության չենթարկվեցին, որի արդյունքում քաղաքի և, ընդհանրապես, շրջանի պաշտպանության շուրջ բույլ տփած վիսալներն ամբողջությամբ քարդվեցին տեղի «հակարողակիլյան» քաղաքական ուժերի, այդ բույլ՝ Դաշնակցության վրա: Ամեն կերպ քողարկվել կամ էլ խեղարյուրվել է այդ տարիներին Բաքվում Դաշնակցության և բոլշևիկների միջև տեղ գտած համագործակցության պատմությունը: Ներկայումս, երբ հնարավոր է դարձել «քացել շատ փակագծեր», կարիք կա վերանայելու նաև այս խնդիրը:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ձևավորվել էին երկու հիմնական հակաղիք ճամբարներ: Դրանցից մեկը հակարողակիլյան ճամբարն էր՝ Թիֆլիս կենտրոնով, իսկ մյուսը՝ բոլշևիլյան ճամբարը՝ Բաքու կենտրոնով: Հակարողակիլյան տրամադրությունները հիմնականում գերիշխող էին վրաց և «աղյոթեջանցի» բնակչության մեծամասնության վստահությունը վայելող մննչեկիլյան և մուսավարական ուժերի շրջանում: Հայկական կողմի ներկայացուցիչ Դաշնակցությունն էլ «մակընթացության» մեջ էր հայտնվել այս երկու ճամբարների միջև: Կանգնելով բարդ ընտրության առաջ՝ նա փորձում էր միաժամանակ օգտվել բոլոր հնարավոր տարրերակներից: «... Թիֆլիսի Ազգային Խորհրդողը, - գրում է Ա. Գյուլիսանդանյանը, - տաճիկների ճնշման տակ, յանուն հայ ժողովովի փրկութեան, ստիպուած եղաւ, հակառակ իր սկզբունքներին, շեղումներ կատարել Դաշնակիցների վերաբերմամբ և Բարումում հաշտութիւն կնքեց տաճիկների հետ: Մինչեւ Բագուի Ազգային Խորհրդը, գտնուելով տաճիկների ազդեցութիւնից միանգամայն հեռու, որոշեց շարունակել Ազգային Խորհրդի նախկին քաղաքականութիւնը եւ, չկարողանալով համակերպութել Բաքվումի դաշնագրին, ու ինքն իրեն համարելով հայ ժողովովի խևական կամքը, սկսեց գրադուել ընդհանուր հայութեան վերաբերեալ խնդիրներով: Այդ նպատակով նա պատզամատրութիւններ ուղարկեց Պարսկաստան՝ անզիացիների մօտ եւ Մուսկուա՝ բոլշևիկների եւ գերմանների մօտ...»:¹ Նման բազմաքայլ կոմքինացիայի սկզբը Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումն ու նրա օժանդակությունը ստանալու էր: Դրան հասնելու համար Դաշնակցությունը առաջին հերթին պետք է լեզու գտներ Անդրկովկասի բոլշևիլյան ուժերի հետ:

1917թ. նոյեմբերի 15-ին բոլշևիկները կարողացան Բաքվում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը.² Սակայն ավելի դժվար եղավ այդ իշխանությունը պահելը, ինչի համար էլ Բաքվում բոլշևիկները գնացին դաշնակցականների հետ համագործակցության: Նման քայլն ուներ իր դրդապատճառները: Դրանցից ամենախոսունը Անդրկովկասում և, մասնավորապես, Բաքվում տեղի ունեցած ընտրությունների արդյունքներն էին: Անդրկովկասում բոլշևիկների ցածր վարկանիշի մասին առաջին հերթին փաստում էին Սահմանադիր ժողովի անդրկովկասյան ընտրությունները: Առաջարկված 36 բոլշևիկ թեկնածուներից ընտրվում է միայն մեկը՝ Ստ. Շահումյանը, իսկ Կովկասի գինվորական ընտրական շրջանից էլ՝ բոլշևիկ Ա. Բաղդաևը: Նոյեմ-

¹ Ա. Գյուլիսանդանյան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, ԺԹ. տարի, թիւ 9/225, Պոսքըն, յուլիս, 1941, էջ 101-102:

² Տես ս Ա. Արզումանյան, Ստեփան Չահումյան, Երևան, 1978, էջ 432-433, նաև Ս. Սելիբրյան, Սոցհայտ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշառ քաղաքներում 1900-1920թթ., Երևան, 1997, էջ 96: Գ. Պոստա, Գերմանուս սպառավակ Յանձնական պատմությունները 1910-1918 թվականներում, Մոսկվա, 1978, ս. 88:

ընտրություններում ավելի մեծ քվով պատգամավորական տեղեր են ստանում հակարողէիկյան ճամբարի ներկայացուցիչներ համարվող մի շարք կուսակցություններ: Դրանցից առաջին տեղում էին մենշևիկները՝ 15 պատգամավոր, ապա իրար էին հաջորդում դաշնակցականները՝ 10 պատգամավոր, էտոնները՝ 8 պատգամավոր, մուսավարականները՝ 7 պատգամավոր:³ Նույն պատկերն արտացոլված էր Անդրկովկասի քաղաքական կյանքում: Բոլշևիկները չկարողացան իշխանության համար պայքարում լիարժեք հաղթանակի հասնել Անդրկովկասում: Դրա հիմնական պատճառը ոչ այնքան մի շարք բոլշևիկների անվճարականությունն էր, ինչպես խորհրդահայ պատմագորության մեջ էր ընդունված համարել,⁴ այլ բոլշևիկների՝ Անդրկովկասում ունեցած չափազանց ցածր վարկանիշը, որի մասին էլ փաստում էին վերը նշված ընտրության արդյունքները: Համանման վիճակ էր նաև Բարվում կայացած ընտրություններում: Սահմանադիր ժողովի 1917թ. նոյեմբերի 26-ին (դեկտեմբերի 9-ին) Բարվի շրջանում անցկացված ընտրություններում քաղաքանակների ձայնները բաշխվել էին հետևյալ հերթականությամբ: Դաշնակցություն՝ 12.157, Մուսավար՝ 9669, բոլշևիկներ՝ 9109, էտոններ՝ 8328, կադետներ՝ 7346, մենշևիկներ՝ 3899, ևս երեք քաղաքական ուժեր ստացել էին շատ շնչին ձայններ: Բարվի արիեստափորական շրջաններից ստացված ձայններն էլ բաշխվել էին այլ հերթականությամբ. Մուսավար՝ 12.066, էտոններ՝ 8900, Դաշնակցություն՝ 7602, բոլշևիկներ՝ 5393, մենշևիկներ՝ 1483, կադետներ՝ 1088: Այլ պատկեր էր ստացվում զինվորականության տված ձայններից. բոլշևիկներ՝ 7699, էտոններ՝ 1541, կադետներ՝ 620, դաշնակցականներ՝ 555, մենշևիկներ՝ 277, մուսավարականներ՝ 21: Այսպիսով, կուսակցություններից յուրաքանչյուրի ստացած ընդիանուր ձայնների քանակը հետևյալն էր. բոլշևիկներ՝ 22.201, մուսավարականներ՝ 21.756, դաշնակցականներ՝ 20.314, էտոններ՝ 18.769, կադետներ՝ 9054, մենշևիկներ՝ 5659:⁵ Ցարիկմի տապալումից հետո բոլշևիկները Բարվում դանդաղ քայլերով էին բարձրանում իշխանության սանդուղքով: Առաջին քայլը 1917թ. սեպտեմբերին նշանակված Բարվի քաղաքային խորհրդի ընտրություններն էին, որոնց արդյունքում կուսակցությունները դասավորվում են հետևյալ հերթականությամբ. Էտոններ՝ 19 պատգամավոր, մենշևիկներ՝ 17, դաշնակցականներ՝ 16, մուսավարականներ՝ 16, Ռուսաստանի մուտքմանների կուսակցություն՝ 12, բոլշևիկներ՝ 9, կադետներ՝ 8 և այլն:⁶ Խրադարձությունների ականատես կադետ Բ. Բայկովը գրում է, որ բոլշևիկները միայն ընտրությունների վերջում Բարվում հայտնված զինվորականների կողմից ստացած քվենների միջոցով են կարողանում ապահովել այդ 9 պատգամափորական տեղերը, և ավելացնում. «Չիններ դա, հավանաբար բոլշևիկներն ընդհանրապես ներկայացված չեն էլ լինի Բարվի քաղաքային խորհրդում»:⁷ Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակի ալիքների վրա Բարվի բոլշևիկները 1917թ. դեկտեմբերին նախաձեռնում են նոր ընտրություններ, որոնցում նրանց հաղթանակը այդքան էլ լիարժեք չէր. բոլշևիկներ՝ 51 պատգամավոր, դաշնակցականներ՝ 41, ձախ էտոններ՝ 38, աջ էտոններ՝ 28, մուսավարականներ՝ 21, մենշևիկներ՝ 11:⁸ Նման արդյունքների դեպքում բոլշևիկները կարող էին հայտնվել Բարվի խորհրդում ոչ թե հաղթանակած մեծամասնության, այլ մեկուսացված փոքրամասնության դերում: Դրա համար բավական էր, որ դաշնակցականները, աջ էտոնները,

³ Տե՛ս Գ. Ակոնյան, Ստեփան Շայուն. Ժամանակական առաջնություն /1878-1918/, Մոսկվա, 1973, ս. 145:

⁴ Տե՛ս Լ. Խուլիշշուլյան, Ստեփան Շահումյան. Պետական և պարտիական գործունեությունը 1917-1918 թթ., Երևան, 1959, էջ 139-143:

⁵ Տե՛ս Ս. Բելենենկու և Ա. Մանվելով. Ռевոլուցիոն 1917 թ. ազգային պատմություն / Ազգային պատմություն / Հայաստան, 1927, ս. 214:

⁶ Տե՛ս և «Արխիվ ռուսական պատմություն» ամսագործությունը. Ի. Գեսսենոմ, մ. 9-10, Մոսկվա, 1991, ս. 111:

⁷ Նույն տեղը, ս. 110:

⁸ Տե՛ս Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 117, նաև Յ. Բարգայզեր, Ռեվոլուցիոն և գրաժանական պատմությունը 1917-1918 թթ., Վ. Արզումանյան և Ս. Մելիքյանը այլ թվային տվյալներ են բերում, որոնց արդյունքում, սակայն, կուսակցությունների գրանցության հերթականությունը չի փոփոխվում – Ս. Արզումանյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1978, էջ 435; Ս. Մելիքյան, Բագուհի հերոսամարտը, «Դայրենիք» ամսագիր, Գ. տարի, թիվ 7/31, մայիս, 1925, էջ 108:

մուսավարականները և մենշեկինները համատեղ հանդես գային: Խորհրդահայ պատմագրության մեջ, անկախ բոլոր հերյուրանքներից, չին կարող անտեսել այս տեսնենքը. «Պետք է նկատի ունենալ, - գրում է Մ. Արգումանյանը, - որ այդ կուսակցությունները (դաշնակցական, մուսավարական, աջ էւլուական, կադեռական, մենշեկիլյան - Մ. Հ.) որոշակի ազդեցություն ունեն մասսաների մեջ: ... Շիշտ է, բոլշեկիններն, ըստ արժանվույն, գնում էին առջևից, բայց մնացածների բլոկը գերավշուրջյուն էր տախուն նրանց».⁹ Դեռ բարձ էին այս կուսակցությունների՝ միասին գործելու հիշողությունները, երբ վերջիններս համախմբվել էին հակարուշեկիլյան Հանրային ապահովության կոմիտեում, ինչպես նաև, երբ 1917թ. մայիսի 11-ի Բարվի նորմատիր խորհրդի նախագահի ընտրության ժամանակ նշված քաղաքական ուժերն այդ պաշտոնում ընտրում են էսէն Սաքը Սահակյանին՝ խափանելով Շահումյանի ընտրվելուն ուղղված բոլշեկինների ջանքերը: Այդպիսի սցենարի կրկնվելու հնարավորությունը լուրջ դրդապատճառ էր, որպեսզի բոլշեկինները համագործակցության գնային նշված քաղաքական ուժերից որևէ մեկի հետ: Հարց էր ծագում, թե ո՞ր ուժի: Ակզենական շրջանում բոլշեկինները չին կորցրել Բարվի քարարներին իրենց կողմն գրավելու հոլյուսերը՝ նպաստելով միայն քարար բոլշեկիններից կազմված Հումմեր կուսակցության ստեղծմանը:¹⁰ Այս «մուտուման բոլշեկինների» կուսակցությունը՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ, մեկ անգամ չէ, որ ապացուցում է իր գոյության անարդյունավետությունը: Բարվի բոլշեկինները, չնայած չեն կասեցնում Հումմերի գործունեությունը՝ հավանաբար պահելով նրան որպես «պահեստային ուժ», այնուամենայնիվ, ընտրություններում նրա ցույց տված արդյունքները ուղղակի ստիպում են բոլշեկիլյան վերնախավին հայացք բերել դեպի Դաշնակցությունը: Դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ այս կուսակցությունների միջև արդեն նկատելի էին համագործակցության նշաններ՝ ի դեմս «Թուրքահայաստանի մասին» դեկրետի և թիֆլիսյան համաձայնագրի*: Հենց այս համաձայնագրով էլ նախատեսվում էր լուրջ համագործակցություն Դաշնակցության ու բոլշեկինների միջև Անդրկովկասի տարածքում, այդ բվում նաև՝ Բարվում: Բոլշեկինների ու դաշնակցականների միջև համագործակցության օգտին էր խոսում նաև առկա ռազմաքարական իրադրություններ, որը հայությանը ուղղակի ֆիզիկական ոչնչացման առաջ էր կանգնեցրել: Նշված կուսակցություններից միայն Դաշնակցությունն էր, որ մինչև վերջ փորձելու էր խոչընդոտել բուրքական գորքերի կողմից Բարվուն գրավելու ծրագրի իրականացմանը, իսկ Մուսավարը հակառակ դիմք էր գրադեցնելու: Դրա պատճառն այն էր, որ բոլշեկինների ծրագրերում չէր նախատեսվում Բարվի կորուստը, ուստի տրամարանական էր, որ նրանք պետք է ձգտեին այս հարցում համագործակցել իրենց հետ համախոն ուժի՝ Դաշնակցության հետ: Դաշնակցականները ևս ձգտելու էին այդ համագործակցությանը՝ ելեկով ազգապահապաննան խնդրի պահանջից: Նման կարծիք ունեին նոյնիսկ ուստի հակարուշեկինները: Գեներալ Դենիկինը, հիշելով հայ ժողովրդի ծանր վիճակը Հայաստանի հանրապետության հոչակումից առաջ և հետո, նշում է, որ Դաշնակցությանը ուղղակի անհրաժեշտ էր կապը Ռուսաստանի հետ, և ընդգծում. «Ցանկացած Ռուսաստանի, անկախ նրա քաղաքական կարգից, թեկուց և խորհրդային, միայն թե նա տիրապետեր ուժի և հայ ժողովրդին փրկելու հնարավորություն ունենար»:¹¹ Իսկ կադեւ Բ. Բայկովն իր հերթին գրում է, որ Բարվում որքան վառ էր արտահայտվում քարարների անշատողականությունը, այնքան ավելանում էր հայերի՝ ուստամետ լինելու ցանկությունը. «Հայերի մեջ, -իիշում է Բայկովը, - ընդգծված կերպով խոսում էր ինքնապահապաննան բնազրը: ... Հայերի հենց այդ

⁹ Մ. Արգումանյան, Ստեփան..., էջ 435:

¹⁰ Տե՛ս «Արքա բառում...», էջ 108:

* 1917թ. դեկտեմբերի 4-ից մինչև հունվարի վերջը Թիֆլիսում Դաշնակցության ներկայացուցիչների և բոլշեկինների միջև ընթացած քանակցությունների արդյունքում կնքված համաձայնագրով նախատեսվում էր, որ Անդրկովկասի խորհրդայնացման գործում բոլշեկինները, ստանալով դաշնակցների օժանդակությունը, ապահովելու էին հայերի ֆիզիկական անվտանգությունը, ընդունելու էին որպես հնքանապար մարզ Արևելյան Հայաստանը խորհրդային Ռուսաստանի կազմում և տալու էին Արևանտահայաստանին անկախություն:

¹¹ Ա. Դենիկին, Օպերկու բառում, Մոսկվա, 1991, էջ 140:

հոգեբանական վիճակով էլ նաև բացատրվում էր նրանց՝ նույնիսկ բոլշևիկների հետ գնալու հակածությունը: Հայերն անկեղծ ասում էին. «Մենք ոռուների հետ ենք, եթե նույնիսկ նրանք բոլշևիկներ են»:¹² Քաղաքի բնակչության վիճակագրական տվյալներն ուղղակի «պարտադրում» էին բոլշևիկներին հաշվի նատել Դաշնակցության հետ: 1912թ. հունվարի 1-ի տվյալներով Բարձի նահանգում հաշվառվել էր 846.553 մահմեղական (շիա և սունի բարարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 167.814 ուս, 115.621 հայ: Խոկ Բարու քաղաքում նույն ժամանակ բնակվում էր 174.469 մահմեղական, 103.527 ուս, 73.341 հայ:¹³ Տվյալները մեկ տարի անց համաշափ փոփոխություն էին կրել: 1913թ. Բարձի նահանգում բնակվում էր 72.6456 մահմեղական կրոնի ներկայացուցիչ (շիա և սունի բարարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 178.420 ուստաներ, 116.918 հայեր: Նրանցից 175.185 մահմեղական, 103.902 ուս, 74.066 հայ բնակվում էին Բարձում: 1913թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Բարձի նահանգում բնակվում էր 726.456 մահմեղական կրոնի ներկայացուցիչ (շիա և սունի բարարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 178.420 ուստաներ, 116.918 հայեր: Նրանցից 175.185 մահմեղական, 103.902 ուս, 74.066 հայ բնակվում էին Բարձում:¹⁴ Այսպիսի տվյալների համադրումը ենթադրել է տալիս, որ մինչև 1918թ. սկիզբը Բարձի բնակչության թվաքանակի հարցում, գոնես մուտքմանների ու հայերի դեպքում, դժվար բն լուրջ տեղաշարժեր լինելին: Ակնհայտ էր, որ մուտքմանների մեծ մասը չէր ընդունած եղբայրական Թուրքիային, իսկ հայերը կորցնելու շատ քան ունեին: Չի բացառվում, որ տեղի բոլշևիկների պարագությունների մեջ մեծամասնություն կազմող, ազգությամբ հայ գործիչների ազգային պատկանելիությունն էլ որոշակի դեր խաղացած լիներ այդ համագործակցության կայացման գործում: Դրա հետ մեկտեղ՝ չի կարելի նաև բացառել անձնական կապերի գործոնը՝ մասնավորապես Ռուսությունը և Ստ. Շահումյանի դեպքում¹⁵:

Խոսքը տաճր դաշնակցական ու խորհրդահայ պատմագրության ներկայացուցիչներին: Ռուբեն Դարբինյանը, խոսելով Բարձում բոլշևիկների հետ Դաշնակցության համագործակցության մասին, նշում է. «Ու թես մենք՝ Դաշնակցականներս, մեր գաղափարներով եւ քաղաքական ձգտումներով հակառակ էինք Խորհրդային իշխանութեան, քայլ գտնելով քրքական մահացու վտանգին ներքեւ՝ հարկադրուած էինք պայքար չնդել բոլշևիկներուն դէմ, մանաւանդ որ Բագուի կամ կովկասեան Ատրպեյճանի մեջ հայութիւնը չէր կրնար հետապնդել ազգային որոյն քաղաքական յատու նպատակներ: Մենք ինն ունեինք միայն իմքնապաշտպանութեան խնդիրներ եւ այդ պատճառով ալ կ'աշխատէինք չէզոքութիւն պահել բոլշևիկներու եւ քրքական Մուսաւարի հանդեպ, որոնք արդէն խուլ պայքարի մեջ էին իրարու հետ:

Սակայն, շուտով պարզուեցաւ, որ մենք չպիտի կարողանանք պահել մեր նախասիրած չէզոքութիւնը: Նախ որ՝ բոլշևիկները շատ տկար էին Բագուի մեջ եւ անխուսափելի պիտի ըլլար անոնց պարտութիւնը քրքական Մուսաւարէն, որ լաւ զինուած՝ զօրացած էր տաճիկ զինուորական զերիներու շնորհի: Երկրորդ՝ բոլշևիկներու պարտութեան յետոյ, կասկած չկար, որ Մուսաւարը պիտի հաշի մաքրէր հայերուս հետ: Եւ, վերջապէս, հայ զանգուածները չէին

¹² «Արքս ռուսկոύ ...», ս. 116:

¹³ Տե՛ս «Կավկազսկի կալենդար հա 1913 թ.», ուժ ք. Ա. Էլեզենգեր և Հ. Ստելմաշուկա, Տիֆլուս, 1912, ս. 128 -131; Ա. Գյուլխանդանյանի հաղորդած տվյալների համաձայն Բարու քաղաքում մահմեղականների թիվը հասնում էր 176.187-ի, ուստաներինը՝ 103.527-ի, հայերինը՝ 73.351-ի - Ա. Գյուլխանդանյան, Բագուի..., «Դայրենիք» ամսագիր, ժթ. տարի, թիվ 9/225/, Պուրըն, յուլիս, 1941, էջ 93:

¹⁴ Տե՛ս «Կավկազսկի կալենդար հա 1914 թ.», ուժ ք. Ա. Էլեզենգեր և Հ. Ստելմաշուկա, Տիֆլուս, 1913, ս. 110 -113; 1913թ. Բարձի վիճակագրական տվյալներ է հաղորդում նաև Բ. Իշխանյանը, ըստ որի մահմեղականների թիվը հասնում էր 101.803-ի, ուստաներինը՝ 67.730-ի, հայերինը՝ 57.040-ի - Բ. Իշխանյան, Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների, Բարու, 1919, էջ 183:

¹⁵ Տե՛ս Ա. Ալչուշեան, Ռուսություն Բագում, «Դայրենիք» ամսագիր, ԼՂ. տարի, թիվ 11/369/, Պուրըն, նոյեմբեր, 1956, էջ 59; նաև «Ռուսություն մահուան վարսունամեղակին առթիւ», Պեյրութ, 1979, էջ 354:

կարող բոլորովին անտարբեր մնալ այն կոտի հանդէպ, զոր սկսած էին բոլշևիկները Մուսաւարի դէմ, մանաւանդ որ անոնք (բոլշևիկները) ոչինչ կը խնայէին՝ իրենց կողմը քաշելու համար հայերը»:¹⁶ Այս մեկնարանությունները գալիս են լրացնելու մեր նշած դրդապատճառները: Հետաքրքիր է, որ խորհրդահայ պատմագրության մեջ էլ եղան այդ համագործակցության վերաբերյալ սրափ գնահատականներ: Գ. Հակոբյանի մոտ կարդում ենք. «Ուժերի հարաբերակցությունը (Բարփում – Մ. Հ.) այնպիսին էր, որ բոլշևիկները չեն կարող միայնակ իշխանություն ձևավորել ու տանել իրենց ուղեգիծը»: Այնուհետև, անդրադառնալով Դաշնակցության՝ բոլշևիկների հետ համագործակցելու շահերին՝ նա նշում է. «Բարփի դաշնակները զգուշանում էին գերմանա-բուրքական զավթիչների Անդրկովկաս զալուց, կողմնորոշվում էին դեպի Ռուսաստան և Բարփում աջակցում բոլշևիկների իշխանությանը որպես համառուսական իշխանության ներկայացուցիչների»:¹⁷ Ի մի բերելով երկու հեղինակների մեկնարանությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ այդ համագործակցության Բարփի փուլը երկու կուսակցությունների համար էլ կառուցված էր փոխշահավետության սկզբունքի վրա: Դաշնակցության համար դա բուրքական վտանգից պաշտպանվելու բոլշևիկյան Ռուսաստանի երաշխիքն էր, իսկ բոլշևիկների համար՝ Դաշնակցության հնարավորությունների օգտագործման անհրաժեշտությունը: Փաստորեն, այս սկզբունքների անփոփոխ մնալով էր պայմանավորված նշված համագործակցության տևողությունը:

М.Оганнисян: Мотивы сотрудничества партии Дашнакцутюн и большевиков в Баку.

В данной статье мы попытались представить те мотивы, которые способствовали сотрудничеству партии большевиков и Дашнакцутюн в г. Баку. Мотивов несколько: низкие показатели в выборах большевиков в городские и районные органы местного самоуправления, наличие разных национальностей, а именно: татар (азербайджанцев), армян, русских и т.д.

M. Hovhannisyan: The motives of the cooperation of Dashnaksutyun and bolshevics in Baku.

In this article we tried to represent those reasons which contribute to the formation of relations between Dashnaksutyun and bolshevics in Baku. The motives are-

The low rating results in the elections of the urban and regional local self governing bodies of Bolsheviks, the presence of different nations especially of tatars /azerbaijanians/, armenians, russions and others.

¹⁶ Ո. Դարբինեան, Փոթորիկի օրերուն, «Դայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթըն, յունուար, 1948, էջ 22:

¹⁷ Գ. Ակոպյան, նշվ. աշխ., ս. 173: